ՈՐՈՇՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/21» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

Ք. Երևան 23.10.2025թ.
ժամը 11:00

Հանձնաժողովի նախագահ՝

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Ա. Պապիկյան

Անդամներ՝

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի օգնական Թ. Կարապետյան

Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի բյուջետային գործընթացի պատասխանատու Ա.Մարգարյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ Ն. Մկրտչյան

1. Տեղեկություն www.eauction.armeps.am էլեկտրոնային համակարգում հայտերի բացման վերաբերյալ:

1.1 «**ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/21**» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով www.eauction.armeps.am համակարգ հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 2025թ. հոկտեմբերի 20-ի ժամը 10:00-ն: Հակադարձ աճուրդը տեղի է ունեցել հոկտեմբերի 21-ին ժամը 10:00-ին:

1.2 ԷԱՃ մրցույթի շրջանակներում հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները /անվանումը, հեռախոսը և հասցեն/:

N	Մասնակցի անվանում	Էլ. փոստի հասցե	հեռախոսահամար	ՀՎՀՀ
1	«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ	info@technoforum.am	+374 91 009 610	01253291
2	ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ	mkhitaryangnumner@gmail.com	093666330	02312456

	ՍՊԸ			
3	ՓԻ-ԼԵՆԴ ՍՊԸ	p-andelectronics@mail.ru	+37494954647	01276958
4	ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ ՍՊԸ	h_davo@mail.ru	+37477474006	00474273
5	«ԷԿՈՀԻԹ» ՍՊԸ	ruzanna.seyranyan@ecoville.am	077257364	08297073
6	Փրիթի Ուեյ ՍՊԸ	b2bvesta@gmail.com	+37477723135	01829451

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

2. «ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/21» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ սույն ծածկագրով հրավերի պահանջների համապատասխան կազմած լինելու մասին

2.1 «**ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/21**» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգին մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ փաստաթղթերը.

- Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարություն համաձայն հավելված N 1-ի
- Առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը
- Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը
- Գնային առաջարկ՝ www.eauction.armeps.am էլեկտրոնային հարթակում:

2.2 «ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ-ի կողմից www.eauction.armeps.am համակարգում ներկայացրած հայտը համապատասխանում է «ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/11» ծածկագրով հրավերի պահանջներին, և հանձնաժողովի կողմից հայտը գնահատվել է **բավարար:**

2.3 «ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի՝ տեխնիկական բնութագիրը թերի է լրացված, մասնավորապես ապրանքի մակնիշը, արտադրողի անվանումը, ինչպես նաև ապրանքի նկարագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը, **հանձնաժողովը որոշեց.**
նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով, և հանձնաժողովի քարտուղարի կողմից ծանուցել «ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ-ին, որպեսզի շտկի վերը նշված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

2.4 «ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում ներկայացվել է շտկված փաստաթղթի տարբերակը www.eauction.armeps.am համակարգում, և հանձնաժողովի կողմից հայտը գնահատվել է **բավարար:**

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

3. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

Հարցում ստացվել է՝

Հարցադրում N 1՝ Հարգելի պատվիրատու, արդյոք MAF կամ DAF սերտիֆիկատ ներկայացնելը պարտադիր պայման է, չեք կարծում որ դրանով սահմանափակում եք մասնակիցների թիվը: Վերջերս ստուգումներ արդյունքում պարզվել է որ շատ հաճախ հաղթող մասնակիցները չեն ներկայացնում այդ փաստաթղթերը, իսկ պատվիրատուների կողմից ընդունվում են դրանք:

Պարզաբանում N 1՝ Գնման առարկաների տեխնիկական բնութագրերը կազմված չեն այն միտումով, որպեսզի սահմանափակվի հնարավոր մասնակիցների քանակը: Հրավերով 1-ին և 3-րդ չափաբաժիններով պահանջվում է արտադրողի կողմից նամակ հավաստագրի (MAF) տրամադրում, երաշխիքային սպասարկման ապահովում արտադրողի պաշտոնական սպասարկման կենտրոնում: Խնդրում ենք առաջնորդվել հրավերի տեխնիկական բնութագրով:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

4. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ

4.1 Մասնակիցների գնային առաջարկները հետևյալն են.

Հ/Ը	Ապրանքի անվանումը	Կանխատեսվող գնման գին / ՀՀ դրամ/	Մասնակցի անվանումը	/Նախնական առաջարկ, / ՀՀ դրամ		Վերջնական առաջարկ / ՀՀ դրամ		Մասնակցի կարգավիճակը
				Գումարն առանց ԱԱՀ	Ընդհանուր գին	Գումարն առանց ԱԱՀ	Ընդհանուր գին	
1	Համակարգիչ ամբողջը մեկում	4 000 000	«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ » ՍՊԸ	3 999 000	4 798 800	2 760 000	3 312 000	
			ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ	1 500 0000	1 800 0000	2 800 000	3 360 000	
2	Սեղանի համակարգիչներ	400 000	«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ » ՍՊԸ	405 000	486 000	405 000	486 000	մերժված
			ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ	15 000 000	18 000 000	15 000 000	18 000 000	մերժված

3	լազերային տպիչներ	400 000	«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ » ՍՊԸ	399 600	479 520	333 000	399 600	
			ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ	15 000 000	18 000 000	15 000 000	18 000 000	մերժված
4	օդորակիչ,12000 BTU	400 000	ՓԻ-ԼԵՆԴ ՍՊԸ	390 000	468 000	233 111	279733.20	
			«ԱՅԹԻ ԷԼԵԿՏՐՈՍՈՖԹ» ՍՊԸ	333 331	399 997.2	275 864	331 036.80	
			«ԷԿՈՀԻԹ» ՍՊԸ	400 000	480 000	296 000	355 200	
			«ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	15 000 000	18 000 000	300 000	360 000	
			Փրիթի Ուեյ ՍՊԸ	333 300	399 960	325 300	390 360	

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

5. «ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/21» ծածկագրով՝ համակարգչային տեխնիկայի և օդորակիչների ձեռքբերման ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին

Գնման հանձնաժողովը որոշեց.

Ընտրված մասնակիցներ ճանաչել

- **«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ–ին՝ 1-ին և 3-րդ չափաբաժինների մասով,**
- **«ՓԻ-ԼԵՆԴ» ՍՊԸ -ին՝ 4-րդ չափաբաժնի մասով:**

5.1 Հաստատել «ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/21» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

5.2 Հաստատել «ՎԱՔՏ-ԷԱՃԱՊՁԲ-25/21» ծածկագրով ԷԱՃ 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ Գնումների մասին ՀՀ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա:

5.3 Սույն ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

5.4 Պայմանգիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակիցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում նախատեսված ապրանքների, գնման գնի 10 (տասը) տոկոսի չափով՝ և որակավորման ապահովում՝ նախատեսված ապրանքների գնման գնի 15 (տասը) տոկոսի չափով:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3 դեմ-0

Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝	Ա. Պապիկյան	
Անդամներ՝	Թ. Կարապետյան	
	Ա. Մարգարյան	
Քարտուղար	Ն. Մկրտչյան	